

IV. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

2010թ.-ի ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են ՀՀ ՎՊԽ կողմից 2003թ. ընդունված «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգ»-ին համապատասխան:

ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումների գործող տեղային ցանցը միավորել է տեխնիկական պահանջներին համապատասխանող 190 համակարգիչ, գործել է «ԷՆԷՍԷՄ-ԴՈՄԵՆ» դոմեյնային միջավայր, որը կառավարվել է «Վինդոու-2000» սերվերի միջոցով: Այն ապահովել է կենտրոնացված կառավարումով հուսալի միջավայր, ներառյալ հակավիրուսային պաշտպանությունը:

Տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով 2010թ.-ին այցելություններ են կատարվել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներ, որտեղ մասնավորապես կատարվել են հետևյալ աշխատանքները՝ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալություններում արդիականացվել են ծրագրային փաթեթները, թարմացվել են հակավիրուսային ծրագրերը, կարգավորվել են տեղային ցանցերը և մոդեմային կապը համապատասխան գործակալությունների տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

Շարունակվել է վիճակագրական և վարչական տվյալների արխիվացումը: Համակարգչային սարքավորումների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով կատարվել են ստուգումներ, ախտորոշումներ և սարքավորումների վերանորոգում:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում հանդիսացող մարդահամարի վարչությունում տարվա ընթացքում կարգավորվել է տեղային ցանցը և տեղակայվել են անհրաժեշտ ծրագրային փաթեթեր և կենտրոնացված կառավարումով հակավիրուսային ծրագրեր:

2010թ.-ի ընթացքում ՀՀ ԱՎԾ-ում շահագործվել են թվով 73 տվյալների բազաներ: Անձնակազմի կառավարման բաժնի տվյալների մշակման համար ստեղծվել է 1 հատ նոր ծրագրա-տեխնոլոգիական համալիր, ինչպես նաև 45 տարբեր ոլորտների ծրագրա-տեխնոլոգիական համալիրներում կատարվել են 76 փոփոխություններ: ՀՀ ԱՎԾ առանձնացված ստորաբաժանումներում շահագործվել են 14 ծրագրա-տեխնոլոգիական համալիրներ և 3-ը՝ 68 կազմակերպություններում: Այդ տեղեկատվությունը մուտքագրվել է տեղերում և փոխանցվել ՀՀ ԱՎԾ՝ մշակման և ամփոփման նպատակով: Հաշվի առնելով, որ 2011թ.-ից սկզբնական տեղեկատվությունը հավաքագրվելու է ամսական (դիսկրետ) կտրվածքով, կատարվել են փոփոխություններ՝ 8 տվյալների բազաներում:

Շարունակվել է դասակարգիչների տվյալների հիմնապաշարի վարումը և ընդլայնումը:

Աշխատանքներ են տարվել տվյալների հիմնապաշարը տեղեկատվությամբ լրացնող և ժամանակագրական շարքերի ստացումն ապահովող ծրագրերի մշակման-նախագծման ուղղությամբ:

Շարունակվել են Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ)՝ Հայաստանի ցուցանիշների տվյալների բազայի «**Armenia_MDG_NSS2010**»՝ հայերեն և անգլերեն տարբերակների արդիականացման աշխատանքները: Մուտքագրվել են 2009թ. ցուցանիշները: Այս բազան տեղակայվել է www.devInfo.info կայքէջում:

2010թ. մայիսին ստեղծվել է www.armdevInfo.am կայքէջը: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, Բնակչության հիմնադրամի և Չարգացման ծրագրի հետ համատեղ կազմակերպվել է «Հայաստանի ՀԶՆ ցուցանիշների տվյալների բազայի հիմնական բնութագրիչները և www.armdevInfo.am կայքէջը» շնորհանդեսը, որի ընթացքում ներկայացվել է զեկույց:

ՀՀ ԱՎԾ աշխատակիցների համար ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել է ուսուցողական սեմինար՝ «ԴեվԻնֆո 6.0 Սպառող և տվյալների բազայի կառավարման մոդուլները» (DevInfo 6.0 User/Database Administration Modules) խորագրով: